


ՀԱՅ ԿԱԿԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ
ԸՆԴՀԱՆՈՒՐ
ՄԻՈՒԹԻՒՆ

ՄՇԱԿՈՅԹԻ
ԵՒ ՈՐԲԵՐՈՒ
ԿԻՐԱԿԻ
ԴԵԿՏԵՄԲԵՐ



1935

ՀԱԼԷՊԻ
ՄԱՍՆԱԺՈՂՈՎ,

Տպ. Տեղ. Սահակեան - Հալեպ

37(47-925)

Մ-84

37(47-925)

44.987

15-84

04.07.2013

11 MAR 2010

ԿԱԹՈՂԻԿՈՍԱՐԱՆ ՀԱՅՈՑ

ԱՆԹԻԼԻԱՍ-ԼԻԲԱՆԱՆ

ՇՐՋԱԲԵՐԱԿԱՆ

ՀԱՅ ՄՇԱԿՈՅԹԻ ԱՄԻՍԻՆ ԱՌԹԻԻ

ՄԵՐ ԲՈԼՈՐ ԹԵՄԱԿԱԼ ՍՐԲԱԶԱՆՆԵՐՈՒՆ

ԵՒ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐՈՒ

Դիտէք որ Որբերու Կիրակիին փոխուեցաւ Հայ Մշակոյթի Ամիսին: Որբերու Կիրակիին առթիւ ամէն տարի Կաթողիկոսարանիս կողմէն կոչ կ'ուղղուէր Զեզի, որպէս զի մեր սիրելի ժողովուրդին սրտաբուխ նուէրները հաւաքէք ի նպաստ որբերու:

Բարեբախտաբար մեր որբերը չափահաս եղան այլեւս, և այժմ կը մնայ մեր ազգային գարոցներու նպաստելու խնդիրը, ինչպէս նաեւ չբացառուսանողներու կրթութեան և դաստիարակութեան գործը, ինչ որ ի գլուխ հանելու համար Բարեգործականը պէտք ունի Հայ ժողովուրդի սիրալոյս գործակցութեան:



63501-67

Հայ Մշակոյթի ամիսը նուիրուած է այդ գործակցութիւնը ապահովելու և արդիւնաւորելու:

Արդէն Բարեգործականի Կեդր. Վարչութեան Շրջաբերականը նոյն նութեամբ հրատարակուեցաւ ՀԱՍԿԻ վերջին թիւին մէջ, որպէս զի ամէն ոք կարգայ դայն և ուղղակի իմանայ Բարեգործականի Կեդր. Վարչութեան միաքը: Իսկ մենք այս Շրջաբերականով կը յանձնարարենք մեր Թեմակալ Սրբազաններու և առաջնորդարաններու պաշտօնական մարմիններուն, որպէս զի հնարաւոր եղած պարտ ու պատշաճ կարգադրութիւնները բնեն Հայ Մշակոյթի Ամիսը, Դեկտեմբերը, արդիւնաւորելու համար՝ ի նպաստ Բարեգործականի մշակութային ձեռնարկներուն:

Վստահ ենք որ արագ և սիրալոյս կարգադրութիւններով պիտի ապահովէք Հայ Մշակոյթի Ամիսին յաջողութիւնը, Բարեգործականի ահագն կան Մասնաժողովներուն ընծայելով բոլոր զիւրութիւնները:

Օրհնաձայն ողջոյններով

Աղօթարար

1935 Նոյեմբեր 20

Անթիլիաս

ՍՍ.ՀԱՅ Բ. ԿԹՂ. ԿԻՂԻԿԻՈՅ

ԱԹՈՌԱԿԻՑ ՆՈՐԻՆ ԲԱՐԳԵՆ ԿԹՂ.



ՄԵԼԳՈՆԵԱՆ ՎԱՐԺԱՊԵՏԱՆՈՅ

Միեկի հայրենակիցներ,

Յայտնի է քե, ի յիշատակ Միութեանս յաւեռ ողբացեալ Հիմնադիր-Նախագահ Պօղոս Նուպար փառայի, որ Ոսկեղէն Պատուիրանքի հիման վրայ Որբերու Կիրակիի նուիրահաւաքութիւնը հաստատած էր եւ իր կոչերով նուիրագործած էր այդ գեղեցիկ աւանդութիւնը, ամեն տարի Դեկտեմբերի առաջին Կիրակիէն սկսեալ մեր Միութեան շրջանակներուն մէջ այդ աւանդական նուիրահաւաքութիւնը հաւատարմօրէն կատարուած է, վերջին տարիները «Հայ Մրշակոյթի Կիրակի» եւ «Որբին եւ Ուսանողին օրը» սրտագրաւ անուններուն տակ:

Հայ ժողովուրդին համար այսօր իրաւամբ ամենէն կենսական գործը կը նկատուի հայ որբերու եւ չհաւոր մանուկներու տնտեսական դաստիարակութիւնը՝ որպէս օտարութեան մէջ ազգապահպանումի գերագանց սասար: Այդ գիտակցութեամբ է որ վերջերս լայրած ենք մեր յաւագոյն ջանքերը եւ 1934-1935 դպրոցական տարեշրջանի ընթացքին, չի հաշուելով Մելգոնեան Կրթ. հաստատութիւնը եւ Վարժապետանոցը, գլխաւորաբար Մերձաւոր Արեւելի անբարեկեցիկ զաւուրներուն մէջ, կրթական բազմազան վարկերով, օգնած ենք 130 վարժարաններու եւ փոքրաքիւ հայերէնի դաստարաններու, որ առանց այդ օժանդա-

կուրեան մեծ մասամբ փակուելու պիտի դասապարտուին: Հայ Մշակոյթի այդ իսկական համագային վառարաններուն մէջ կը դաստիարակուին աւելի քան 15,000 հայ ուսանողներ, մեծագոյն մասը երկսեռ չֆաւոր սպաք, որոնց կը ջամբուի, Միութեանս հովանիին եւ հսկողութեան ներքեւ, ազգային առողջ կրթութիւն մը: Ոչ ոքի գաղտնիք է թէ արհասահմանի մէջ հայերէն լեզուի, հայ կրօնի, հայոց պատմութեան եւ մասենագրութեան, հայկական երգի ուսուցումով, ինչպէս նաեւ հայ տղանոցին պանծացումովն է որ կարելի պիտի ըլլայ բախտագուրկ որբը եւ ուսումնասենչ մանուկը Հայ պահել, եւ նորահաս օտարամէս սերունդին մէջ արծարծել ազգային զգացումը: Յայտնի է թէ այդ գործը վերջերս բնդարձակեցինք հայ երիտասարդութեան յետ-դպրոցական դաստիարակութեան եւ զարգացումի օգտաւ ձեռնարկներով եւս:

Արդ, այս տարի 1 Դեկտեմբերէն սկսեալ մինչեւ նոյն ամսոյ վերջը, պիտի գործադրենք Հայ Մշակոյթի եւ Որբերու օրուան աւանդական նուիրահաւաքութիւնը, ուրկէ կախում ունի Միութեանս կրթական բնդարձակ ծրագրին յաջողութիւնը, մանաւանդ մշակութային ներկայ ձեռնարկներու եւ նպաստներու շարունակութիւնը: Արդարեւ, կտակային հիմնադրամներով միայն քանի մը

հարիւր ոսկիի ապահով եկամուտ մը տրամադրուած է կրթական բնդարձակ եւ մեծածախս մարզին համար, այնպէս որ մնացեալ ծախքը, որ հետզհետէ կ'աւելնայ պէտքին ու պահանջին ննշումներուն տակ, կը հոգացուի մասնաւորապէս Հայ Մշակոյթի այս տարեկան նուիրահաւաքութեամբ, եւ այդ նպատակին համար տրամադրուելիք բարեյօծար օժանդակութիւններով՝ զոր դժբախտաբար տնտեսական տագնապը զգալապէս նուազեցուցած է (1934ին գաղութահայ կրթական ձեռնարկներու համար ծախսուած գումարն էր Անգլ. ոսկի 5260):

Մեր յոյսը կը դնենք ուրեմն, անխտիր, հայ ժողովուրդի արեւոտնոց նւիրումին վրայ, այն մեծ վստահութեամբ որ Մշակոյթի Օրուան առթիւ անիկա չպիտի զլանայ յօգուտ հայ որբին եւ հայ դպրոցին իր ժպիտն ու լուսնան, որքան ալ համեստ ըլլայ այդ ազգային փրկագինը, որովհետեւ անխտիր ամեն Հայ կը սիրէ Հայ Լեզուն եւ Հայ Դպրոցը:

Բարիգ, 15 Նոյ. 1935 Վարիչ-Պատուիրակ Գանձապահ Նախագահ
Վ. ՄԱԼԷՋԵԱՆ Լ. ԿԻՒՄԻՇԿԵՐՏԱՆ ԶԱՐԵՀ ՆՈՒՊԱՆ



Հ. Բ. Ը. Միութեան Մշակոյթի Կիրակին, պանծացումի օրն է մանաւանդ Սահակ եւ Մեսրոպի: Սուրբ պահէ՛ անոնց յիշատակը, եւ, տասնեակ հազար երկսեռ հայ մանուկներու գանձանակին մէջ դնելով այդ օրուան ճաշագինդ, վայելէ՛ այդ հոգեկան մե՛ծ հրճուանքը:

Սիրելի հայրենակիցներ,

Հ. Բ. Ը. Միութեան տեղական մասնաժողովը պատիւը ունի բոլոր ազգասէր եւ բարեսէր հայերու ամենայուրջ ուշադրութիւնը հրաւիրելու այն մեծ զոհողութեանց եւ ծառայութեանց վրայ, որ Բարեգործականը իր 28 ամեայ գոյութեան ընթացքին մատուցած է հայ ժողովուրդին ընդհանրապէս, Կիլիկիոյ, Սուրիոյ եւ Լիբանանի Հայութեան մասնաւորապէս, փրկելով տասնեակ հազարներով որբ ու որբուհիներ եւ սովահար ու հիւանդ Հայ դաղթականներ մահուան ստոյգ վտանգէն, կերակրելով կրթելով եւ խնամելով զանոնք: Անոր բարերար գործունէութիւնը կը տարածուի այսօր ամբողջ Հայութեան վրայ, հայրենիքի մէջ ըլլայ, թէ՛ դաղութներու:

Ուր որ Հայ ժողովուրդը ունէ պատճառով թշուառութեան եւ աղէտի կ'ենթարկուի եւ օգնութեան կը կարօտի, իր ցաւերն ամօքելու համար վարժուած է արդէն զիմելու ամենէն առաջ Բարեգործականին, որ իբր Հայութեան ուղիէն բղխած գերազանցապէս Հայ մարդասիրական բարեսիրական Միութիւն, կը փութայնէ անմիջապէս իր օգնութիւնը աղէտեալ Հայութեան, առանց ունէ յարանուանական եւ հատուածական իտարութեան:

Անթիւ և անհամար են իրական վաստակը, սկսեալ կովկասահայութենէն, թրքահայաստանի սովէն և մեծ պատերազմի աննախընթաց աղէտներէն մինչև Զանգեզուրի երկրաշարժը, մինչև Պէյրութի Ս. Խաչ թաղի հրդեհը, քէմբերու քանդումին հետեանքով գաղթականաց տեղաւորումը և այլն, և ըն:

Բարեգործականը իր գոյութեան առաջին տարիներէն սկսեալ իր զուտ մարդասիրական և բարեսիրական գործունէութեան հետ զուգընթացաբար, ոյժ տուած է նաև Հայ մշակութային ձեռնարկներու, բանալով վարժարաններ թրքահաստանի ամենէն խաւարակուռ անկիւնները, թրքախօս քրտախօս հայ գիւղերու մէջ այն հաստատ համոզումով, որ Հայութիւնը Հայ կարելի է պահել և բարձրացնել բարոյապէս և նիւթապէս, մայրենի լեզուն ուսուցանելով և տոհմային նախակրթութիւն մը ջամբելով:

Նայն ուղղութեամբ ընթանալով Բարեգործականը սկսած է վերջին տարիներս աւելի ոյժ տալ մշակութային ձեռնարկներու՝ յօգուտ թէ՛ հայրենի հողին վրայ հաստատուած և թէ՛ գաղութներու մէջ գանուող հայ ժողովուրդին:



Մեր պաշտօնական վիճակագրութիւններն ու թուանշաններն՝ թէ Բարեգործականը ինչ զոհողութիւններ կ'ընէ նաև այս ուղղութեամբ:

Սիրելի հայրենակիցներ, Բարեգործականը իր 29 ամեայ գոյութեան ընթացքին Հայութեան դրական օգուտէն զատ ո՛չ մէկ վնաս տուած է: Հայ ժողովուրդի օգտին համար է նաև Մշակոյթի օրուան հանգանակութիւնը, որմէ ամէնէն աւելի օգտուողը պիտի ըլլայ դարձեալ Սուրիոյ և Լիբանանի Հայութիւնը, իր տուածին բազմապատիկը գանձելով Բարեգործականէն:

Հետեւաբար ամէն ազգասէր և բարեսէր հայուն պարտքն է իր կարողութեան համաձայն մասնակցիլ Մշակոյթի Օրուան հանգանակութեան. վստահ ըլլալով որ իր լուծման պիտի ծառայէ Հայ Մշակոյթի տարածման:

Մշակոյթի Կիրակին թո՛ղ քեզ յիշեցնէ թէ՛ հեռուն որբեր կան եւ աղքատիկ մանուկներ, որ կարօտը կը զգան Հայ Դպրոցին, Հայ Լեզուին, Հայ Դիրքին ու երգին, եւ Հայ Ուսուցչին:

44. 987

ՄԵԼԳՈՆԵԱՆ
ԿՐԹԱԿԱՆ
ՀԱՍՅԱՏՈՒԹԻՒՆ



Այլեւս Որբերու Կիրակին եւ Մշակոյթի Կիրակին ձուլուած են:
Դի՛ր լումադ Որբին եւ Մշակոյթին գանձանակին մէջ Քաջակերպ
Հ. Բ. Ը. Միութեան մշակութային մեծ ծրագիրը:

